՝

**ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ**
**ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ**

**Պ-1361-22.05.2026-ՊԻ-011**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-149-Ն օրենքի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է Հայաստանի Հանրապետության համայնքների կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայր տանող միջպետական կամ հանրապետական կամ տեղական նշանակության ավտոճանապարհի՝ բնակավայրի սկիզբը նշանակող հատվածների մոտ: Յուրաքանչյուր բնակավայր տանող միջպետական կամ հանրապետական կամ տեղական նշանակության ավտոճանապարհի՝ բնակավայրի սկիզբը նշանակող հատվածների մոտ Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման առանձնահատկությունները և կարգը հաստատում է Կառավարությունը:»:

**Հոդված 2.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

՝

## Հիմնավորում

***Առկա իրավիճակը***

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում բացակայում է իրավական կարգավորում, որով պարտադիր կսահմանվեր Հայաստանի Հանրապետության պետական դրոշի տեղադրումը Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերում: Գործնականում որոշ համայնքներում պետական դրոշներ տեղադրված են համայնքային նախաձեռնությամբ, սակայն միասնական մոտեցում և պարտադիր պահանջ գոյություն չունի:

Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերում պետական դրոշը բացակայում է կամ գտնվում է ոչ պատշաճ վիճակում, ինչը չի ապահովում պետական խորհրդանիշների լիարժեք և համաչափ ներկայացվածությունը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Հայաստանի Հանրապետության պետական դրոշը պետականության, ինքնիշխանության և ազգային արժանապատվության կարևորագույն խորհրդանիշներից է: Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերում պետական դրոշի առկայությունը՝

կուժեղացնի ազգային ինքնագիտակցությունը,

կստեղծի միասնական պետական միջավայր,

կունենա կրթական և դաստիարակչական նշանակություն,

կխթանի պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքը քաղաքացիների և այցելուների շրջանում:

՝

***Առաջարկվող կարգավորումը***

Առաջարկվում է օրենքով սահմանել, որ Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտք գործելիս պարտադիր պետք է տեղադրվի Հայաստանի Հանրապետության պետական դրոշ:

***Ակնկալվող արդյունքը***

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ նպաստել ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը, ապահովել միասնական պետական խորհրդանշական միջավայր, խթանել պետական խորհրդանիշների նկատմամբ հարգանքի ձևավորումը քաղաքացիների և Հայաստանի Հանրապետություն այցելող անձանց շրջանում:

՝

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/1) ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 2.** «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» 2006 թվականի հունիսի 15-ի ՀՕ-149-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է Հայաստանի Հանրապետության համայնքների կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայր տանող միջպետական կամ հանրապետական կամ տեղական նշանակության ավտոճանապարհի՝ բնակավայրի սկիզբը նշանակող հատվածների մոտ: Յուրաքանչյուր բնակավայր տանող միջպետական կամ հանրապետական կամ տեղական նշանակության ավտոճանապարհի՝ բնակավայրի սկիզբը նշանակող հատվածների մոտ Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման առանձնահատկությունները և կարգը հաստատում է Կառավարությունը~~Հայաստանի Հանրապետության դրոշը մշտապես բարձրացվում է Հայաստանի Հանրապետության համայնքների յուրաքանչյուր բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ: Բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ Հայաստանի Հանրապետության դրոշի բարձրացման առանձնահատկությունները և կարգը հաստատում է Կառավարությունը~~:»:

**Հոդված 2.** ~~**Եզրափակիչ և անցումային դրույթներ:**~~

՝

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է ~~1-ին հոդվածով լրացվող մասով նախատեսված առանձնահատկությունները և կարգը Կառավարությունը հաստատում է~~ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361-22.05.2026-ՊԻ-011/1) ԵՎ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԾԻ (Պ-1361[1]-01.07.2026-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԻԾԻ | | | | |
| 1. | Կառավարություն | Հոդված 1 | «բնակավայրի վարչական տարածքի հիմնական մուտքերի մոտ» ձևակերպումը փոխարինել «բնակավայր տանող միջպետական կամ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանրապետական կամ տեղական նշանակության ավտոճանապարհի՝ բնակավայրի սկիզբը նշանակող հատվածների մոտ» ձևակերպմամբ: | | |
| 2 | Կառավարություն | Հոդված 2 | «օրենքի 1-ին հոդվածով լրացվող մասով նախատեսված առանձնահատկությունները և կարգը Կառավարությունը հաստատում է» ձևակերպումը փոխարինել «օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է» ձևակերպմամբ: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| | **«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ» ՆԱԽԱԳԻԾ** | | | | |
| 1. | Կառավարություն | Հոդված 1 | Լրացվող կետում վերջակետից առաջ տեղադրել . և » կետադրական նշանները: | Ընդունվել է | Ընդունվել է: |
| 2. | Կառավարություն | Նախագծի հիմնավորում | Հիմնավորումը լրամշակվել է: | Ընդունվել է: | Ընդունվել է: |